

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ֆրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Սրտասանման
Տարեկան Ֆրանք 126
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը : Ծաւ-
ն ու ցման տողը 10 Սանդիմ : Երու թ/ւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Սանդիմ :
Զհրատարակուած գումարիւնը եւ չհամար :

Հասցե :
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARENA

Ե Ր Ե Ք Գ Ի Ն Ե Մ Ո Ւ Ք



- Ա. Գինեմուլը — Հիմա ո՞վ չի նախանձիր
մեր վրայ :
Բ. Գինեմուլը — Այո՛, բանի որ երեքնիս
միացած ենք :
Գ. Գինեմուլը — Եւ, չէ՞ մի որ Միութիւնը
զօրութիւն է . . .

ԱԶԳԱՅԻՆ

Այս շաբթու Պոլսէն առնուած հայա-
թերթերէն կը քաղենք հետեւեալ կարեւոր(°)
լուրերը :

Ս. Պատրիարքը երէկ իրիկուն ալ Եկես-
ցէի աղօթքը կատարեց :

— Խառն ժողովը գումարուելով՝ ընթա-
ցիկ (°) գործերով զբաղեցաւ : անընթացիկ
գործերը ի՞նչ ըրաւ :

— Վանօրէից խորհուրդին ի նիստ գու-
մարուելուն մաս մը մնաց :

— Տնտեսական խորհուրդը պիտի նիստ
ընէր, բայց օգին աւելուելուն պատճառաւ
չի նստեցաւ :

— Կտակաց հոգաբարձութիւնը տակաւին
դտակ մը չի գտաւ որ գլուխը անցունէ :

— Ուսումնական խորհուրդը որ վարժա-
րանաց դասագիրքերը միօրինակութեան վերա-
ծելու որոշումը տուած էր, հիմա՛ կու՞ս ունե-
ցող հեղինակներուն հետ գաղտնի բանակցու-
թեան մէջ է . կու՞ս չունեցող հեղինակներուն
բաժինն է՝ անդ եղիցի լալ եւ կրճտել թափ-
թափած ատամանց :

— Ըստ որոշման Ազգային Հիւանդանոցի
հոգաբարձութեան, ցորեկները ընդհանուր
պատասպարեալք չորսական հատ ձիթապտուղ
պիտի ուտեն, իսկ պաշտօնեայք պիտի չլա-
կերակուեն որ պիտի ձթկին :

— Ազգային Ընդհանուր Ժողովը պիտի
գումարի . . . չեկող ամսագլխուն :

— Կրօն . ժողովն ալ նիստ պիտի ընէր ,
բայց իւր Գեր . ատենապետը հարուստ նըն-
ջեցեալի մը դամբանականը խօսելու գացած
լլալէն , նիստը յետաձգուեցաւ :

— Սահմանադրութեան վերաբննիչ յանձ-
նաժողովը որոշեց անոր Ա . գլուխը ԱՄԱՆԱ-
ՄԱՆՈՐԱՆ կոխել , որովհետեւ ալ հոտեցաւ :

— Խասգեղցի հարսին օժիտին սնտուկը
դոցուեցաւ :

Եւ փառք յաւիտեանս ամէն :

Փ Ա Յ Տ Ի Խ Ն Դ Ի Բ Ը

Վերջապէս ձմռան կարապետը եղող
արեւմտեան հիւսիսային կծու քամին սկսաւ
ուժգնապէս սուլել , կարծես ըսել կ'ուզէ թէ
դանդալ չի նստինք , որովհետեւ անցեալ
տարուան օտար մարդասէրներու կողմէ եղած
օգնութիւնը այս տարի կը պակսին , ուստի
մենք մեր գլխուն ճարը նայելու ենք .

Անցեալ ձմեռ եթէ միթառական բան
մը կար , այն ալ շատ հիւանդութիւն չըլ-
լալն էր , դժբաղդաբար այս տարի ջերմիւր
ճիրաններուն մէջ առած կը տանջէ մեծաւ
մասամբ աղքատ դաղթականը : Այդ վա-
տուժցած ու նիհարեցած արարածը ի՞նչ պի-
տի ընէ երբ ձիւնն ու բուքն ալ սկսին : Անոր
խրճիթը տաքցնելու համար անպատճառ փայտ
պէտք է . ու եթէ այդ փայտը չի հագացուի ,
շատերը պիտի սառին ու մեռնին :

Ստոյգ աղբիւրէ տեղեկացանք որ Պատ-
ուելի Ա . Ամիրխանեանց պատրաստ է եղեր
կարեւոր գումար մը ստորագրել եթէ մե-
րիններուն կողմէ փայտի համար հանգանա-
կութեան մը ձեռնարկուի :

Կը յուսանք որ աւանց ժամանակ ան-
ցունելու մեր պաշտօնական մարմիններէն մին ,
լլայ Թալ . Խորհուրդը կամ Աղքատախնա-
մը , պարագային ծանրութիւնը նկատողութեան
առնելով , գէթ միմիայն փայտի համար հան-
գանակութեան մը կը ձեռնարկեն :

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Մ Ե Ր

ԱՌ ԻՋԱՐ . . .

Թէ Կալիքսօն ես , ես Տելեմաքն եմ ,
Իսկ Թէ Հերսիլեան , ես ալ Նուման եմ .
Չ'ունիմ , չ'եմ ուղիւր Տուլլոս կամ Մենտոր ,
Խորհուրդ Թէ խրատ քեզ զոհեմ բոլոր :

Թէ կ'ուզես համբոյր նուիրել , օն տո՛ւր ,
Թէ խորհիս առնուլ , չեմ բնաւ ես խուլ .
Հաճոյքիդ համար միշտ պատրաստակամ
Հաղարը կ'առնեմ , հաղարը կուտամ :

Ձի Թէ մաղիք նուրբ Թելեր տարօրէն
Կապանք են անոնց՝ յըբ ըղճեզ սիրեն ,
Ես ՊԱՇՏԵՄ ըղճեզ , սիրովըդ խենդիմ ,
Թո՛ղ որ շղթայովդ անքակ կապկպուիմ :

Թէ աչերդ դեղնուկ սաթ են թանկապին ,
Ես շիւղն եմ յարդի , սաթին լուռ գերին .
Ես բնակիչը եւ անոնք Երկինք ,
Ա՛խ Երկինք Երկիր իրար խառնուինք :

Թէ երկուորեակներ կըրծոցդ վրան
Չոյդ մը պահարդ են Տաճարին դրան
Տաճար Թէ խորան , ես աղօթասէրն եմ ,
Ի սիրտդ անմատոյց սիրոյդ խնկարկեմ :

Կամ երկու ծորան , ուրկէ Անմահին
Այնքան պաշտելի նեկտարներն հոսին ,
Պատուքս ու ծարաւ չափ չ'ունին յաւէտ ,
Թո՛ղ որ կազդուրուիմ կենսատու հիւթէդ :

Թէ այտերդ ունին գնդիկներ կոյր ,
Կուրծքդ ալ նարինջ , կամ երկու խնձոր ,
Ես պարտիզպան եմ Թո՛ղ որ քաղեմ դեղձ
Եւ ոտքերովդ տակ փռուիմ շնչահեղձ :

Նողկանքն առ մարդիկ՝ Թէ ըղճեզ անգութ
Կամ սիրտդ ըրած են սառցոյցներու կոյտ ,
Շունչիս քերմութիւն հալեցնէ քարն ,
Քարն , երկաթ , կապար , ալ ո՛ւր մնաց սառն :

Թէ մէկ խոսք ծաղիկն ես դեռափթիթ ,
 Ես ալ երգիչն եմ պաշտելի վարդիդ .
 Գամ, թռիմ, անցնիմ թուփերուդ մօտէն
 Ի՞նչ կըլլայ, քիչ մ'ալ թառիմ ու պաշ-
 տեմ :

Կամ թէ սրտիկդ լճակ մ'է յստակ
 Ես ալ սուգակն եմ ճարպիկ յաջողակ .
 Թող որ նետուիմ հոն, որսամ կենսաբեր
 Ոստրէն մարգարտին անբաժան ընկեր :

Ե՛կ ուրեմն Իզա՛ր, մազերդ՝ մազերուս
 Հունչըս՝ շունչիդ հետ, թեւերդ՝ ուսերուս
 Խառնենք խառնուինք, անմահներ ըլլանք,
 Սուտ պարկեշտութեան թողլով տա-
 ուպանք :

15 Հոկ. 1897
 Վառնա

ՍՈՒՐՄԱՆ

Տ Ի Կ Ն Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր

— 0 —

ՀԱՊԻՔՆԵՐԸ ՈՂՈՐԿԵԼՈՒ ՀՆԱՐՔԸ

Ամերիկացիք իրաւամբ կը պարծին թէ
 ոչ որ կրնայ հաւասարիլ իրենց՝ շապիկներու
 թեւերն ու կուրծքերն ողորկելու մասին : Մեր
 ընթերցող հիներն անտարակոյս շնորհակալ
 պիտի ըլլան մեզ, եթէ ցոյց տանք իրենց թէ
 ողորկելու այս պղտիկ գաղտնիքն ի՞նչ բանի
 մէջ կը կայանայ : Գործածուելիք նշաստակին
 (քոլա) մասնաւոր պատրաստութեան մէջ կը
 կայանայ պալլապէս այս գաղտնիքը :

Մի կողմէ, նախ լիզրա մը ջուր եռա-
 ցնելու է, որոյ մէջ պէտք է նետել կաղի-
 նի մը մեծութեամբ *սքաւնայէթ*՝ բարակ մը
 տաշելէ վերջ, որպէս զի դիւրաւ հալի : Յե-
 տոյ եռացող հեղուկին խառնելու է քիչ մը
 մեղրամոմ, որպէս զի արդուկելու ժամանակ,
 արդուկը չփակչի լաթին :

Միւս կողմէ նշաստակը պաղ ջրի մէջ
 հարելու է ամենամեծ խնամով, մինչեւ որ
 սերի թանձրութիւն առնուի :

Այս գործողութեան մեծ խնամք տա-

նելու է, եթէ չէք ուզեր որ նշաստակն ե-
 փած ատեն փսորի : Այն ատեն պէտք եռա-
 ցող ջրին մէջ լեցնել այսպէս լուծուած նը-
 շաստակը, կամաց կամաց և անդադար շար-
 ժելով, մինչեւ որ նշաստակն օշորակի մը
 թանձրութիւն առնուի :

Այս վիճակին մէջ 15—20 վայրկեան
 երկելու է, մերթ ընդ մերթ փոյթ տանելով
 շարժել դգալով, որպէս զի սանին տակը չփակ-
 չի : Երեւէ յետոյ, թրջած շղարշէ մը պէտք
 է պարզել և թողելու է որ պաղի մինչեւ
 մարդուս մատը դիմանալու չափ : Այն ատեն
 ձեր շապիկին թեւերն, օձիքն ու կուրծքը
 խնամով կրնաք թաթխել այս հեղուկին մէջ,
 և ծրարելով քառորդ մը սպասելէ ետքը կըս-
 փիք արդուկել : Արդուկը շատ տաք ըլլալու
 է, և պէտք է ուժով կոխել և արագաբար
 շարժել, որպէս զի ողորկուին միօրինակ ըլ-
 լայ :

Օձիքներու ու թեւոցներու համար կըր-
 նաք նաեւ մասնաւոր շոհ (քոլա) մը գոր-
 ծածել, որոյ գեղադիրն աւասիկ .

Լիզրա մը նշաստակի համար աւելցու-
 ցէք .

90 կրամ Սիլիքաթ տը սուտ .

30 " Կօմ արապիք կամ տէքսթէրին .

60 " Հաբար, բայց փոշի ըլլալու չէ :

2է՞ք զարմանար եթէ ըսենք որ Ամե-
 րիկայի մէջ ամենէն ճարտար արդուկողներն
 են աղտոտ կարծուած քիւնացիներն, որ ճա-
 րտարարուեստի այս ճիւղին մէջ մեծ հաճա-
 քաւ հանած են :



ԳՈՒՀԱԿ


Ա. ՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադոյց
 Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
 բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
 ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով
 գիմել մեր իմբագրութեան :

ԽԱՌՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ Ի Կ. ՊՈԼԻՍ)



ՊԼՈՒԻ Գ.

ՄԻՀՐԱՆ ԱՂԱ

Այն ատենները Բերայի Գալեօն — գուլ-լուգ Բէշկիրճի փողոցը, եռայարկ տան մը մէջ կը բնակէր Միհրան աղա անունով թիւլ-պէնտճիի վաճառական մը, որ հակառակ իւր կամաց և ուղղամտութեան՝ գործերուն ձախտոյ ընթացքէն՝ մէկ երկու անգամներ սնանկացած էր :

Այսօր մարդը որ 50 գարուններ տեսած էր, ունէր կին մը և երկու աղջիկներ, որոց անդրանիկը 18 տարեկան էր, Բուրմինէ անուն, բարձրահասակ և գեղադէմ, քիչ շատ ուսեալ, միանգամայն հեզահամբոյր բնաւորութեամբ. իսկ կրտսեր աղջիկը 10 տարեկան էր, որ վարժարան կը յաճախէր. ասոնցմէ զատ տանը մէջ կը գտնուէր նաև Միհրան աղայի քենին (պալտըղ) 40 տարեկան, ամուրի, Օրիորդ Սրբուհի անունով, որ Բուրմինէի պէս բարձրահասակ էր :

Այս ընտանիքը ձմրան եղանակը վերոյիշեալ տանը մէջ կ'անցունէր, որ Միհրան աղայի կնոջ հօրմէն ժառանգ մնացած էր, իսկ ամուսնները՝ Ապրիլ ամիսէն օգոստոսութեան կերթային 'ի Պոյաճի գիւղ, դարձեալ տիկնոջ հօրմէն մնացած երկյարկ փայտաշէն տունը :

Օրիորդ Բուրմինէ, որ մէկ երկու տարի Գաղիացի մայրապետներուն վարժարանը երթալով ձեռագործի մէջ յաջող քննութիւն մը անցուցած էր, հիմա դաշնակի դաս կ'առնէր իրենց դրացի դաշնակահար՝ Միւսիւ Լեւոնէն, որ ծանրաբարոյ երիտանարդ մ'էր, և որ, ամառն ալ շաքաթը մէկ երկու անգամ Պոյաճի գիւղ կերթար դասատուութեան :

Թերևս ըսողներ գտնուին թէ, քանի որ

Միհրան աղայն աղաչաւի նախանձելի վիճակ մը չունէր, ի՞նչ տեղը կար օգոստոսութեան երթալու, բայց պէտք է գիտնալ որ, Բերայի տունները որ մեծաւ մասամբ նեղ և մութ են, բնակչաց նիհար կաղմուածք ունեցող մասը ձմեռը անցունելէն ետքը անպատճառ օգոստոսութեան կը կարօտին կարգ մը հիւանդութեանց առաջին տունելու համար. Միհրան աղային ընտանիքը այս կարգէն էր, ասկէց զատ, այն օգոստոսութեան միջոցին, Միհրան աղայն միևսկ չոգենաւի երթեւեկի աւելորդ ծախս մը ունէր :

Այս ընտանիքը իր անտեսագիտութեամբը բաւական ունեւոր ընտանիք մը կը կարծուէր : Տանը մէջ համերաշխութիւնը կը տիրէր, սէրը կը թագաւորէր, մէկ խօսքով երջանիկ ընտանիք մ'էր :

Միհրան աղայն, որուն խանութը ի Պոլիս Սուլթան համամը Աստիւր աղային խանութին կից էր, բարեկամացած էր անոր հետ :

Միհրան աղայնը որոշած էին նոյն շաբաթուն փոխադրուիլ 'ի Պոյաճի գիւղ : Ուստի հինգշաբթի օրը տիկին Միհրան իր երկու աղջկանց ու քրոջը հետ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին ուխտագնացութիւն մը ընելէ ետքը՝ տնական մէկ քանի պէտքեր առնելու համար կ'ամուրջէն Պոլսոյ կողմը անցան և Միհրան աղայի խանութը հանդիպեցան քիչ մը յոգնութիւն առնելու :

Մեր Աստիւր աղայն, որ խանութին առջև նստած յաճախորդի կը սպասէր, օրիորդ Բուրմինէն տեսնելուն պէս խելքը գլլալէն առնուեցաւ, որովհետև օրիորդը ճիշդ իւր հանգուցեալ կնոջը նմանցուցեր էր. — Ինկիլիւզի ախշին կու նուժանի, մեր լուսափօքի հարստին նազն ու էնտամը ունի. Աստուածպետականութիւնը չիթթ խալգ է արեր. — կըսէր մտովի :

Քանի մը վայրկեան ձեռքը ճակտին դրած մտածելէն ետքը, գրպանէն հինգ ոսկինոց մը հանելով Միհրան աղային խանութը մտաւ, ու «Միհրան աղա, քէրէմ ու հիմմէթ անէիք սա հինգը մէյնոցը մէճի-

տիւեով մանրէիք, ըսաւ. ասիկայ՝ օրիորդը
աւելի մօտէն դիտելու պատրաստ էին էր։ Ու
երբ Միհրան աղայն «Շատ աղէկ» ըսելով
դրամարկդէն հինգ ոսկիի մէջիտ կը հանէր,
Աստիւր աղայն աչքին ծայրով օրիորդին կը
նայէր։ Աւերջապէս, դրամները առնելէ ետ-
քը դժուարաւ ինքզինքը խանութ նետեց։

Սիրահարած էր։

””

Մէկ քառորդ ժամ ետքը Միհրան ա-
ղային ընտանիքը խանութէն մեկնեցան։

Աստիւր աղայն աչքովը անոնց հետեւե-
ցաւ մինչև որ անտեսանելի եղան, ապա, քա-
նի մը անգամներ դրացիին խանութին առ-
ջևէն անցաւ դարձաւ, ու առանց Միհրան
աղայէն տեսնուելու, յաջողեցաւ անոր գը-
րագիրը նշանացի կերպով իր խանութը հը-
րաւորել։

— Ի՞նչ է այն Աստիւր աղա, խեղճ է։

— Հիւրիւմմէ՛ պարոն աղա, քչիյ մի
սանկս նստէ։

— Դ՛ազաչիմ, հիմա ժամանակ չունիմ
նստելու, բօստային նամակ պիտի հասցնեմ,
ուստի ինչ որ պիտի ըսես...

— Սա կ'ուզիմ հասկնալ ուր՝ պահ
մի էռաջ ձեր խանութը էկող տիւախ հա-
նումները պիտիւրէ էին։

— Արեւ Միհրան աղային ընտանիքն էր։

— Ըն սէվլի պոյլի պոյկուն պախըշլի
թագէ հանումը ո՞վ էր։

— Միհրան աղային աղջիկը։

— Կարգով է։

— Ոչ տակաւին, բայց ինչո՞ւ հար-
ցուցիք։

— Էֆէնտըմ, թալիմ ու թէրպիյէ-
նուն շատ հաւնեցայ ադ միւճիպով կու հար-
ցնիմ։

— Շատ աղէկ։

— Աֆէրին Միհրան աղա, լայըխլու
թէրպիյէ մի տուեր է իր զաւկին։


Այս միջոցին, առջի օրը Աստիւր աղայն
Է էնի ճամիի սրճարանը տանող բարեկամը

Մաթոս աղան խանութ եկաւ, որով գրագիրը

“Մնաք բարով” ըսելով մեկնեցաւ։

Երկու Ակնցիները մինակ մնացին։

(Շար.)



ԳԱՃԱՃՆԵՐՈՒ ՊԱՆԴՈՒ

Նիւ Եօրքի շրջակայքը պանդոկ մը կայ,
ուր միայն գաճաճներ կ'սպասաւորեն։ Տէրերն
ալ գաճաճներ են՝ Մր. և Տիկն. Տոտ, որք
այդ կալուածին տիրանալէ առաջ Ամերիկայի
ամէն կողմն տօնավաճառներու և հանրային
հանդէսներու մէջ ինքզինքնին ցոյց տուած էին։
Մր. Տոտ, որ 32 տարու է, 77 հարիւրորդա-
մեդր երկայնութիւն ունի. կինն ալ տարիքով
ու հասակով հաւասար իր էրկան և շատ գե-
ղեցիկ է։ Ասոնք աղջիկ մ'ունեցած են որ 3 ու
կէս տարեկան է ու պնդակազմ և 40 հարիւ-
րդ, դամեդր երկայնութիւն ունի։ Պանդոկին
բոլոր սպասաւորք, խոհարարք եւ այլք երկու
սեռէ՝ մէկ մեդրէ տուելի երկայնութիւն չու-
նին։

— 0 —

ՍԻԱՄԻ ԿԻՆԵՐԸ

Սիամի մէջ ամեն մէկ մանտարէն, այ-
սինք աղնուական, իրաւունք ունի տասներ-
կուքէն մինչև քսան, երեսուն կին ունենալու։

Օրինաւոր կինը առաջին անգամ առածն
է, միւսներն ալ թէեւ իր կիներն են՝ բայց
ամենքն ալ առաջին կնկան հրամանին աակ
պէտք է գտնուին։

Ընդհանրապէս կիները դրամով ծախու
կառնուին, 800 ֆրանքէն մինչև 1500 ֆր.
ծախուածներ կան։ Երկու հազար ֆրանք տու-
ողը հրեշտականման էակ մը կրնայ գտնել։

Առաջին օրինաւոր կինն է որ ձեռքովը
կընտրէ մնացեալ կիներուն խումբը, եւ իր

այս ճառարութեան փոխարէն ինքը միայն իրաւունք ունի երկանը ժառանգութեան տիրանալու, և միեւնոյն ատեն ինքը անվաճառելի կը մնայ, մինչդեռ միւսները սովորական ապրանքի մը պէս կրնան ծախուիլ:

Սիւմի թագաւորին համար կըսուի թէ ութ հարիւր կին կը պահէ, որոնց մէջ հիւանալի գեղեցկութեամբ օժտուածներ կան:

Ամեն տարեգլխաւայր — տուժար մը կը դնեն նորին շագանակագոյն վեհափառութեան առջև, որուն մէջ ինքը ձեռքովը կը արձանագրէ տարուան մէջ իր կիներէն քանի զաւակ ունեցած ըլլալը:

Հակառակ իր այս անլուր բաղմանութեան, այսօր Սիւմի թագաւորը միայն 73 զաւակ ունի:

Նամակ առ Խմբագրութիւն

Սիւնիսդրէ 10 հոկ. 1897

Խմբագիր Տէր.

Հայ թերթի մը մէջ «վառդ», ծածկանունով Սիւնիսդրէէն գրուած նամակ մը կարդացինք, որով նամակագիրը ստայօգ ամբաստանութիւններ կընէ տեղւոյս նախկին դասատուին վրայ, որ իբր թէ 660 Փր. շորթած ըլլայ «Հայ Երիտասարդների Միութեան», ընթերցարանի հասցիքէն և գիրքերը կողոպտած:

Ներկայիս պաշտօնապէս կը յայտարարենք որ, վերոյիշեալ անձնուէր և մեր միութեան հիմնադիր դասատուն, մէկ սանդիմ իսկ իւրացուցած չըլլալէն զատ, ումեն զոհողութիւն ըրած է տեղւոյս Հայ Երիտասարդութեան բարոյական ու մտաւոր զարգացմանը համար:

Եւ եթէ մօտիկ անցեալի մը մէջ ահզս կերուած ստակ մը եղած է, այն ալ Ազգ. ընկերութեան 60 Փրանսական ոսկին է, զոր

իւրացուցած է Ա. ընտանիքէն Յակոբ անուն մէկը:

Կը յուսանք որ յանուն անկողմնակալութեան պիտի հաճէք անկիւն մը շնորհել Ձեր թերթին մէջ սոյն հեղբուսին, բուժելու համար գայթակղեալ միտքերը ու փրկելու համար մեր նախորդ դասատուին և ընկերութեանս վարկն ու պատիւը, զոր չարասիրտ անձինք կը քանան միտքել անխղճօրէն:

Ի զիմաց Տնօրէն Ժողովոյ

«Հայ Երիտասարդների Միութեան»,

Վ. Ատենադպիր Ատենապետ
Յ. ՍԻՄՈՆԵԱՆ Ա. Մ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԿԻՆ

Տղայութեան ատեն՝ կինը նորաբոյս ծաղիկ մ'է,

Մշակէ՛ զայն:

Պատանեկութեան մէջ՝ ծովուն վրայ տատանող նաւակ մ'է

Բռնէ և պահպանէ զայն:

Աւելի հասուն տարիքին մէջ՝ առատ այգի մ'է,

Քաղէ՛ զայն:

Ծերութեան մէջ՝ աւաղ ծանր բեռ մ'է

Կրէ՛ և տար զայն:

Թարգմ

ԱՌՆԻՏԻՆԿԱՆ

Աֆիօն. — Ճիպրէին առատութեանը պատճառաւ ասիկայ կըլլող չի կայ:

Կարմիր. — Կարգ մը երիտասարդաց եւ օրիորդաց քով կարմրելու երես չի գըտնուելէն՝ ներկով կարմրիլը մօտա է. որով առուտուրը բանուկ է այս ապրանքին:

Սուտ . — Այս օրերս ամենևին կըլ-
 լող չի կայ :
 Ցորին Այս ապրանքներուն գինն-
 Լուբիա րը խուռու խահուէճինն-
 Սիսեռ րուն կողմէ ամուր բոնուած
 քարի են :



Անտէր Նամակ մը.

Հետեւեալը, որ նուագածու շէխուհի
 մը ուղղուած է, անցած իրիկուն Մուսալ-
 Լայի հրապարակէն գտնուեր է :

Մայն լի պէ ֆրօլայն, էյ ֆարսա թօբ-
 լայան,
 Ինթէպիլիթէ, Սէվտիղիմսին պիր թանէ :
 Այն ըսթանցիկ, ճէպտէ նանայ պիր ըս-
 ֆանցիկ :

Ապանըզ կիվըմ. Ապայը եագտըմ :
 Տրայց ֆրայց, Պիտի սիրուիմ բայց :
 Շէմսըն կիղձըն հավպայա, Տիւշտիւմ աշգ
 ու սէվտայա :

Ի՛հ լի պէ զի, Շէյթան պէզի :
 Վիսընզի տաս, Պատասխան չի տա :
 Իղձ միս լինցին հիէր, Լէյլէին էօմրիւ տէ
 լազլագ իլէ կէշէր :

Իպիտի զիպիտի, Պու հալիմտէ սէվտիմ
 սէնի :
 Ըղնախձն ֆիխձն ցնծաղիմ, Մեշըբ որ
 տրամ խել ք չունիմ :

(Մատիտով և ածապարանօք գրուած ըլլա-
 ղէն, մնացեալը անընթեռնելի էր :)

Իբի ահպապլար .

— Հաճի աղա, տույտուժի պու սէնէ
 Իբի այ գատար Վարնայա հավա թէպտիլինէ
 կիթմիշին :

— Էվվէթ .

— Պարէ պիրազ քէյֆինի տիւզէլթտի՞ն .

— Խայըր :

— Սէպէ՞պ .

— Պէն նէրէյէ կիթսէմ ֆայտա իթմէզ .
 տօգթօրուն պիրի պէնի պիր գաշ սէնէ եանը-
 նա ճան էվլատը ալըպ պագարսա՝ պէլքի էյի
 օլապիլէյիմ :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 25

Ոտք ունիմ չունիմ,
 Թէեւ քայլ ունիմ.
 Լեզու բերան ունիմ,
 Սակայն չի խօսիմ :
 Իրաւ աչք ու քիթ
 Եւ ականջով եմ,
 Սակայն չի տեսնեմ,
 Ոչ ալ հոտոտեմ :
 Չեյլաք զարմանաք,
 Լսել ալ չգիտեմ .
 Արդ, ըսէք տեսնեմ,
 Պարոններ, ի՞նչ եմ :

Թիւ 23 հանելուկն էր 290, զոր լու-
 ծեց Ռուսճուգէն Տիար Ստեփան Եազմաճեան :
 (Հասցենիդ իմացուցէք որ նուէրնիդ ղրկենք) :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴՕ

ԵՐԱՌԻ ՍԵՐ
 (Վիսպակ Հայ Յեղափոխական կեանքեմ)
 ԳԻՆ I ՖՐԱՆՔ

ԿԸ ԵՐԱՌԻԻ, Վառնա Իրաւունքի
 խմբադրատուն, Ֆիլիպէ Անտօն Դօշի
 քով, Ռուսճուգ էֆէ Խօրասանճեանի
 սրճարանը :



ԿԱԼՎԱՆԻՍԹ



Ամեն տեսակ
տպագրական կա-
ղապարներ պատրաստող, նաեւ
անձնական և թէ՛ առևտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երև-
ցած քառաչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են
և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ
քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Գիմել Ի Վառնա Չիլիկիւր-
լէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Այցեատման, հասցէտման, նամակա-
գլուխ, հրաւիրատման, բարենիշ, տոմ-
ոակ, եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:
Գին գոհացուցիչ: Գիմել Հայելիի խմ-
բագրութեան:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՄՍԻՅ

100 հատը 2 ֆր. Ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցեատման գոր-
ծածութեան հրահանգը պարունակող տետրակ
վը, որուն կողքին վրայ այցեատման տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Գիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ֆախք 30 սանդիմը
յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կանխիկ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ

ԿԱՄ

ԴՍՍԱԴԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲՐԻՆ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով,
կը պարունակէ մանկական զուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ
երախայներուն ծառայել նաեւ իբր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
զբօսեցուցիչ և հրահանգիչ է միանգամայն
անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մա-
քուր և կազմը՝ վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
2րդ. թաղ, թիւ 1104:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹ. Ե. ԹՈՎԱՍԵՍԵԱՆ

Այս անգամ իւր բնակութիւնը տեղափոխած
է Գում գաւու, Առաջին Ուշասթ թիւ 195,
(նախկին Արծրունեան վարժարանը) ուր ըստ
առաջնոյն կընդունի հիւանդներ ումէն օր ա-
ռաւօտեան ժամ 10էն 12, իսկ կէս օրէն
վերջը 2էն 5: Չորեքշաբթի օրերն կէս օ-
րէն վերջ ժամը 2էն 5 ձրիապէս կը գար-
մանէ:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Ռուսձուգ	Տիարք Եղբարք Սարաֆեան.
Սիլիսդրէ	Տիար Արթուրի Սարգսեան:
Հսւմլա	" Յովհաննէս Մաճարեան:
Սօֆիա	" Յակոբ Ծերունեան:
Լոնտոն	" Հայկ Աստուածատուր

Отговоренъ редакторъ: Н. Драгуловъ
Печатница «Взаимность» — Варна.